ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
Գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին

09 հուլիսի 2025թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով թիվ ԵԴ2/5330/02/25 քաղաքացիական գործով ՀՀ պաշտպանության նախարար Ս. Պապիկյանի միջնորդությունը՝ գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ԳԱՌՈՒ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2025թ մայիսի 22-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ թիվ «ՀՀ ՊՆ-ՓՊՄԱՊՁԲ-21/44,60-ՀՀ ՊՆ-ՓՊՄԱՊՁԲ-25-7/15» ծածկագրով փակ պարբերական մրցույթի գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրությունը՝ «Արմոս» ՍՊ ընկերության ներկայացրած հայտը բավարար գնահատելու որոշման մասով, անվավեր ճանաչելու և որպես հետևանք «Արմոս» ՍՊ ընկերությանն ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու որոշումների մասերով անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Դատարանի 2025թ. հունիսի 11-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Դատարանի 2025թ. հուլիսի 2-ի որոշմամբ թիվ ԵԴ2/5330/02/25 քաղաքացիական գործով «Արմոս» ՍՊ ընկերությունը պատասխանող կողմում ներգրավել որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ:

2025թ. հունիսի 30-ին Դատարան մուտքագրված միջնորդությամբ ՀՀ պաշտպանության նախարար Ս. Պապիկյանը հայտնել է, որ ներկա պահին հրատապ է «Կոշիկ ճտքավոր» ապրանքատեսակի ձեռքբերումը, քանի որ առկա է քանակի և չափսերի դեֆիցիտ, ինչպես նաև նման քանակությամբ ու առկա պաշարներով և չափսերի զգալի բացակայության պայմաններում (40, 43, 44, 45, 46, 47, 48) այլևս անհնար է դառնում ժամկետային զինծառայողների, 2025 թվականի 2-րդ կիսամյակում վարժական հավաքի մասնակիցների, սպայական և ավագ ենթասպայական կազմերի ապահովումը: Այսպիսով՝ «ՀՀ ՊՆ-ՓՊՄԱՊՁԲ-21/44,60-ՀՀ ՊՆ-ՓՊՄԱՊՁԲ-25-7/15» ծածկագրով գնման ընթացակարգով նախատեսված նյութական միջոցների ձեռքբերումը հրատապ է, բնույթ ունի ազգային և

պաշտպանության շահերից, ուստի ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներով՝ խնդրել է վերացնել «ՀՀ ՊՆ-ՓՊՄԱՊՁԲ-21/44, 60-ՀՀ ՊՆ-ՓՊՄԱՊՁԲ-25-7/15» ծածկագրով գնման գործընթացի կասեցումը:

Ուսումնասիրելով ներկայացված միջնորդությունը, ինչպես նաև թիվ ԵԴ2/5330/02/25 քաղաքացիական գործի նյութերը՝ Դատարանը եզրահանգում է, որ այն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, դատարանը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարների, իսկ իրավաբանական անձանց դեպքում գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում: Դատարանը սույն մասով նախատեսված որոշումը դրա կայացման օրն անհապաղ ուղարկում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինն այդ որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում:

Տվյալ պարագայում հիմք ընդունելով ներկայացված միջնորդությունը և ի հիմնավորումն դրա ներկայացված ապացույցները՝ ՀՀ ՊՆ թիկունքային ապահովման վարչության պետի կողմից 2025թ. հունիսի 21-ին ՀՀ ԶՈՒ ԳՇ օպերատիվ վարչության ռազմատնտեսական պլանավորման վարչության պետին ուղղված թիվ Է/փ-3389 գրության պատճենը և ՀՀ ԶՈՒ ԳՇ պետի կողմից 2025թ. հունիսի 24-ին ՀՀ պաշտպանության նախարարին ուղղված թիվ 924/96 զեկուցագրի պատճենը, որոնց համաձայն՝ *ներկա պահին հրատապ է «Կոշիկ ճտքավոր» ապրանքատեսակի ձեռքբերումը, քանի որ առկա է քանակի և չափսերի դեֆիցիտ, ինչպես նաև նման քանակությամբ ու առկա պաշարներով և չափսերի զգալի բացակայության պայմաններում (40, 43, 44, 45, 46, 47,48) այլևս անհնար է դառնում ժամկետային զինծառայողների, 2025 թվականի 2-րդ կիսամյակում վարժական հավաքի մասնակիցների, սպայական և ավագ ենթասպայական կազմերի ապահովումը,* հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Դատարանի 2025թ. հուլիսի 9-ի մեկ այլ որոշմամբ նշանակվել է ապրանքագիտական փորձաքննություն և գործի վարույթը անորոշ ժամկետով կասեցվել է, Դատարանն արձանագրում է, որ նման պայմաններում թիվ «ՀՀ ՊՆ-ՓՊՄԱՊՁԲ-21/44, 60-ՀՀ ՊՆ-ՓՊՄԱՊՁԲ-25-7/15» ծածկագրով գնման գործընթացը կասեցված թողնելը չի բխում պաշտպանության և ազգային անվտանգության շահերից,

որպիսի պարագայում եզրահանգում է, որ գնման գործընթացի կասեցումը պետք է վերացնել:

Ինչ վերաբերում է միջնորդության դեմ Հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացված առարկություններին և ի հիմնավորումն դրանց ներկայացված ապացույցներին, ապա Դատարանն արձանագրում է, որ այդ ապացույցները չեն պարունակում առարկությունների հիմքում ընկած փաստերի առկայությունն ավելի հավանական դարձնող /հաստատող/, ինչպես նաև միջնորդության հիմքում ընկած փաստի առկայությունը պակաս հավանական դարձնող /հերքող/ որևէ տեղեկատվություն, այլ միայն պարունակում են մեկ այլ ծածկագրով գնման գործընթացի շրջանակներում Պատասխանողի կողմից, զինվորական կոշկեղենի արդիականացման գործընթացով պայմանավորված, նոր համաձայնագիր չկնքելու վերաբերյալ տեղեկատվություն:

Արդյունքում Դատարանը եզրահանգում է, որ ՀՀ պաշտպանության նախարար Ս. Պապիկյանի կողմից ներկայացված միջնորդությունը հիմնավոր է և ենթակա է բավարարման, այն է՝ թիվ «ՀՀ ՊՆ-ՓՊՄԱՊՁԲ-21/44,60-ՀՀ ՊՆ-ՓՊՄԱՊՁԲ-25-7/15» ծածկագրով գնման գործընթացի կասեցումը պետք է վերացնել:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11, 199-200 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

ՀՀ պաշտպանության նախարար Ս. Պապիկյանի միջնորդությունը՝ գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին, բավարարել:

Վերացնել թիվ «ՀՀ ՊՆ-ՓՊՄԱՊՁԲ-21/44,60-ՀՀ ՊՆ-ՓՊՄԱՊՁԲ-25-7/15» ծածկագրով գնման գործընթացի կասեցումը:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ